# Քրիստոնյա Հայաստան

2014, ՆՈՅԵՄԲԵՐ Բ, ԹԻՎ 22 (426)


## Մոմավառության մատուռի եւ կաթողիկոսական դամբարանի հիմնօրհնեքի արարողությունը Մայր Աթոռում



Նոյեմբերի 14-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի, տեղի ունեցավ Մայր տաճարի շրջափակում կառուցվող մոմավառության մատուռի եւ կաթողիկոսական դամբարանի հիմնօրհնեքի արարողությունը:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարերարներ տեր եւ տիկին՝ Գառնիկ եւ Անի Յակուբյանների (ԱՄՆ) հովանավորությամբ կառուցվող մոմավառության մատուռի ճարտարապետներն են Ասլան Մխիթարյանը, Հայկ Մկրտչյանը եւ Արտավազդ Նազարեթյանը: Շինարարությունն իրականացնում է «Հորիզոն-95» կազմակերպությունը:

Արարողությանը ներկա էին Մայր Աթոռում գումարված Հայ Առաքելական Եկեղեցու եպիսկոպոսաց ժողովի առիթով ժամանած եպիսկոպոսաց դասը, Մայր Աթոռի բարերարներ, ՀՀ քաղաքաշինության նախարար, Մայր Աթոռի ճարտարապետական խորհրդի նախագահ Նարեկ Սարգսյանը, ՀՀ մշակույթի փոխնախարար Արեւ Սամուելյանը եւ այլ հրավիրյալներ:

Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ արք. Կճոյանի նախագահությամբ կատարված հիմնօրհնեքի արարողության ավարտին Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանն ընթերցեց կառույցի հիմքերում ամփոփվելիք հիշատակարանը, որում ասված է. *«Բարեհաճ կամոքն բարձրյալն Աստծո, եպիսկոպոսաց երկրորդ ժողովի գումարման օրերին՝ նոյեմբերի 14-ին, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի, ներկայությամբ եպիսկոպոսաց դասի, Մայր Աթոռի միաբանության, բարերարների եւ հավատացելոց, կատարվեց հիմնօրհնեքի արարողությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մոմավառության մատուռի եւ կաթողիկոսական դամբարանի:*

*Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանավոր զավակներ, բարեպաշտ եւ ազգասեր Գառնիկ եւ Անի Յակուբյանների սրտաբուխ նվիրաբերությամբ կառուցվող մատուռում հավատավոր հայորդիք մոմավառությամբ իրենց աղոթքը պիտի վերառաքեն առ Աստված՝ հայցելով ամենակալ Տիրոջ օրհնությունն ու հովանին իրենց կյանքին, մեր Սուրբ Եկեղեցուն եւ համայն ազգիս հայոց: Այս աղոթավայրը նաեւ հանգրվան պիտի լինի Հայրապետաց աճյունների, եւ այստեղ մշտահունչ պիտի լինի աղոթքն ազգիս երախտարժան Հովվապետաց հոգվոց հանգստության համար:*

*Թող Փրկիչ մեր Տերը շեն ու պայծառ պահի Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, հանապազ օրհնի մեր Հայրենիքն ու ժողովրդին, ազգիս բարերար զավակներին եւ միշտ պահպանի Իր ամենախնամ Սուրբ Աջի հովանու ներքո»:*

Այնուհետեւ այս առիթով իր օրհնությունը ներկաներին բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: *«Այս պահին մեր հոգին ցնծում է ուրախությամբ: Աստծո օրհնությամբ եւ աղոթակցությամբ Մեծի Տանն Կիլիկիո Արամ Առաջին Կաթողիկոսի, եպիսկոպոսաց դասի, Մայր Աթոռի միաբանության, բարերարների եւ հավատավոր ժողովրդի կատարվեց մոմավառության մատուռի եւ կաթողիկոսական դամբարանի հիմնօրհնեքը, ուր հավատավոր մեր զավակունք պիտի գան իրենց մոմերը վառելու եւ իրենց աղոթքն առ Աստված բարձրացնելու ազգիս, Հայրենիքի համար: …Իրենց աղոթքը պիտի բարձրանա նաեւ մեր 131 Հայրապետների համար, որոնց իմաստուն առաջնորդությամբ մեր ժողովուրդը դիմագրավել է բոլոր դժվարությունները եւ ապրում է ազատ երկնքի ներքո՝ կրկին պայքարելով իր ազգային գոյության պահպանության համար»*,- ասաց Ամենայն Հայոց Հայրապետը՝ իր գնահատանքը հայտնելով բարեպաշտ Յակուբյան ամուսիններին, ովքեր իրենց արդար քրտինքով վաստակածից մշտապես մաս են հանում ազգին եւ Եկեղեցուն:

Տեր եւ տիկին՝ Գառնիկ եւ Անի Յակուբյանների օժանդակությամբ իրականություն դարձավ Սեւանի Վազգենյան դպրանոցը, իսկ տարիներ առաջ կառուցվեց դպրանոցի նոր շենքը: Գարեգին Բ Հայրապետն իր օրհնությունը փոխանցեց նաեւ Մայր Աթոռի ճարտարապետական խորհրդի անդամներին, ճարտարապետներին եւ շինարարներին:



Այս առիթով իր սրտի խոսքն ասաց նաեւ Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը՝ ջերմորեն ողջունելով այս եւ բոլոր այն ծրագրերը, որ վերջին տարիներին կյանքի են կոչվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնում: Արամ Ա Վեհափառն ընդգծեց, որ ազգին, Եկեղեցուն, հայրենիքին վերաբերող ամեն ծրագիր կենսական նշանակություն ունի, քանի որ նպաստում է Եկեղեցու առավել պայծառացմանը, ազգի հզորացմանը եւ միասնության ամրապնդմանը:

Վերջում շարականի երգեցողության ներքո հիշատակարանն ամփոփվեց մոմավառության մատուռի եւ կաթողիկոսական դամբարանի հիմքերում:

## Գերագույն հոգեւոր խորհուրդը հանդես եկավ հայտարարությամբ

Դեկտեմբերի 1-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով:

Ժողովին, ի շարս այլ հարցերի, անդրադարձ կատարվեց օրերս համացանցում տարածված Երուսաղեմի Հայոց Պատրիարք Նուրհան արք. Մանուկյանի նամակին: Այս առնչությամբ Գերագույն հոգեւոր խորհուրդը հանդես եկավ հետեւյալ հայտարարությամբ.

«Մեր մտահոգությունն ենք հայտնում Երուսաղեմի Հայոց Պատրիարք Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանի անունով Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղղված նամակի առնչությամբ, որն օրեր առաջ տարածվեց համացանցով:

Գերագույն հոգեւոր խորհուրդն անընդունելի է համարում Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանի որդեգրած ընթացքը, ով եկեղեցականին անհարիր բառապաշարով ու ոճով ստվերում է պատրիարքի բարձր հանգամանքը, հարված հասցնում Հայ Եկեղեցու վարկին եւ եկեղեցականության հեղինակությանը եւ փորձում անվանարկել Ամենայն Հայոց Կաթողիկոսին, եկեղեցական ներկայացուցչական ժողովի անդամներին եւ եպիսկոպոսաց դասին: Ցավալի է, որ Պատրիարքի կողմից շրջանառության մեջ են դրվում հորինված մեղադրանքներ՝ մասնավորաբար Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կողմից Երուսաղեմի Պատրիարքությունը թեմի վերածելու վերաբերյալ:

Գերագույն հոգեւոր խորհուրդը հորդորում է Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանին Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի նախաշեմին պատրիարքական բարձր հանգամանքից ակնկալվող ողջախոհությամբ անդրադառնալ իջման ս. Սեղանի առջեւ կատարած իր հավատարմության ուխտին առ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը եւ Ամենայն Հայոց Հայրապետը՝ լծվելով իր առաքելության իրականացմանը:

«Օրինակ եղիր հավատացյալներին քո խոսքով, վարմունքով, սիրով, հավատով եւ մաքուր կենցաղով» (Ա Տիմ. Դ 12):

Գերագույն հոգեւոր խորհուրդն իր բարձր գնահատանքն է արտահայտում եւ զորակցությունը բերում Սրբոց Հակոբյանց միաբանությանը՝ նվիրյալ իր ծառայության համար՝ հորդորելով նախանձախնդիր նույն ոգով շարունակել պահպանել սուրբ տեղյաց հայոց իրավունքներն ի պայծառություն Երուսաղեմի Հայոց Պատրիարքության եւ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու»:

# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

### Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

*20 նոյեմբերի*

## Կիպրոսի ներկայացուցիչների պալատի նախագահին



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Կիպրոսի Հանրապետության ներկայացուցիչների պալատի նախագահ Յանակիս Օմիրուի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար Հրայր Թովմասյանի: Հանդիպմանը ներկա էր նաեւ Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետը, իր օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցելով Կիպրոսի ներկայացուցիչների պալատի նախագահին, անդրադարձավ ամուր հիմքերի վրա ձեւավորված հայ-կիպրական եղբայրական ջերմ հարաբերություններին՝ ներշաղախված բարեկամության եւ գործակցության բազմօրինակ դրսեւորումներով:

Նորին Սրբությունը նաեւ երախտագիտության խոսք փոխանցեց Կիպրոսի իշխանություններին ու ժողովրդին՝ Հայոց ցեղասպանության ճանաչման արդար գործում ունեցած ավանդի համար: Վեհափառ Հայրապետն այս առնչությամբ տեղեկացրեց տիար Յ. Օմիրուին, որ օրեր առաջ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարված եպիսկոպոսաց Ժողովը որոշում է կայացրել Հայոց ցեղասպանության նահատակների սրբադասման վերաբերյալ: Ներկայացվեցին նաեւ Մեծ եղեռնի 100-րդ տարելիցի առիթով Եկեղեցու կողմից ծրագրվող միջոցառումները. ակնկալվում է քույր Եկեղեցիների ներկայացուցիչների՝ այդ թվում եւ Կիպրոսի արքեպիսկոպոս Քրիզոստոմ Բ-ի մասնակցությունը:

Հանդիպմանն իր երախտագիտության խոսքը հայտնեց Յանակիս Օմիրուն՝ փոխանցելով Նորին Սրբությանը Կիպրոսի ժողովրդի ողջույնները: Կիպրոսի ներկայացուցիչների պալատի նախագահը մասնավորապես անդրադարձ կատարեց հայ-կիպրական բարեկամական հարաբերություններից իր ստացած վառ ու անջնջելի տպավորություններին, խոսեց երկու ժողովուրդների անցած պատմական դժվարին ուղու ընդհանրությունների եւ Կիպրոսի կյանքում հայ համայնքի ունեցած կարեւոր դերակատարության մասին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Կիպրոսի ներկայացուցիչների պալատի նախագահը խոսեցին նաեւ երկու եղբայր ժողովուրդների առջեւ ծառացած մի շարք մարտահրավերներից ու խնդիրներից, որոնք կարող են հաղթահարվել միջպետական եւ միջեկեղեցական կայուն համագործակցությամբ:

*24 նոյեմբերի*

## ՏՏ-ում Ֆրանսիայի նորանշանակ դեսպանին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ժան-Ֆրանսուա Շարպանտիեին:

Նշանակման առիթով շնորհավորելով դեսպանին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայ-ֆրանսիական բարեկամության առավել ամրապնդման պատասխանատու առաքելության մեջ նրան հաջողություններ մաղթեց: Իր խոսքում Նորին Սրբությունը մասնավոր անդրադարձ կատարեց երկու ժողովուրդների միջեւ առկա եղբայրական ջերմ հարաբերություններին եւ պետությունների սերտ գործակցությանը՝ գոհունակություն հայտնելով նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում Ֆրանսիայի իշխանությունների կողմից ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված կարեւոր ջանքերի համար:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց նաեւ հայ-ֆրանսիական միջպետական հարաբերությունների արդյունքում ձեւավորված գիտական, տնտեսական, մշակութային փոխգործակցության արդյունավետությանը: Այս առիթով նորանշանակ դեսպանը վստահեցրեց Ամենայն Հայոց Հայրապետին, որ պետք է հետամուտ լինի տարբեր ոլորտներում հայ-ֆրանսիական գործակցության զորացմանը: Ֆրանսիայի արտակարգ եւ լիազոր դեսպանը միեւնույն ժամանակ անդրադարձավ հայ ժողովրդի պատմության մեջ ու կյանքում Հայ Եկեղեցու ունեցած վիթխարի դերակատարությանը, ապա շնորհավորեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ օծման եւ գահակալության 15-րդ տարեդարձի առիթով:

Զրույցի ընթացքում խոսվեց նաեւ Ֆրանսիայի հայոց թեմի եւ եկեղեցական կյանքի, տարբեր Եկեղեցիների հետ Հայ Եկեղեցու միջեկեղեցական հարաբերությունների, ինչպես նաեւ՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով ծրագրվող միջոցառումների եւ նոյեմբերի 11-13-ը Մայր Աթոռում գումարված եպիսկոպոսաց ժողովում Հայոց ցեղասպանության նահատակների սրբադասման վերաբերյալ ընդունված որոշման մասին:

*25 նոյեմբերի*

## ՏՏ-ում Լեհաստանի դեսպանին



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական առաքելությունն ավարտած Լեհաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Զդիսլավ Ռաչինսկուն:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքի խոսքը փոխանցեց դեսպանին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նկատմամբ նրա դրսեւորած առանձնահատուկ ջերմ վերաբերմունքի համար: Նորին Սրբությունը գոհունակությամբ հաստատեց նաեւ վերջինիս պաշտոնավարման ժամանակահատվածում հայ-լեհական միջպետական հարաբերություններում արձանագրված շոշափելի արդյունքները:

Անդրադառնալով երկու ժողովուրդների պատմական կապերին՝ Ամենայն Հայոց Հայրապետը մասնավորապես ընդգծեց, որ դարեր շարունակ ձեւավորված այդ բարեկամության հիմք են հանդիսացել քրիստոնեական հավատը եւ միեւեւնույն արժեհամակարգը, որոնք այսօր եւս հարկ է ամրապնդել տարբեր ոլորտների արդյունավետ փոխգործակցության միջոցով:

Նորին Սրբությունն անհրաժեշտ համարեց նաեւ համագործակցության առավել աշխուժացումը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Լեհաստանի Կաթոլիկ Եկեղեցու միջեւ միջեկեղեցական հարաբերություններում՝ տեղեկացնելով, որ առկա գործակցության արդյունքում կատարվել է հոգեւորական ուսանողների փոխանակություն:

Այնուհետեւ Հայաստանում իր դիվանագիտական ծառայությունից ստացած տպավորություններով կիսվեց տիար Զդիսլավ Ռաչինսկին՝ միեւնույն ժամանակ Նորին Սրբությանը շնորհակալություն հայտնելով Հայ Եկեղեցու կողմից Լեհաստանի եւ Լեհաստանի դեսպանատան նկատմամբ դրսեւորվող հատուկ ուշադրության համար:

Զրույցի ընթացքում խոսվեց նաեւ Լեհաստանի հայ համայնքի, Հայաստանում լեհ ժողովրդին ավելի ճանաչելի դարձնելուն ուղղված ծրագրերի եւ հայ-լեհական եղբայրական կապերի մասին:

Հանդիպմանը ներկա էր Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպս Աջապահյանը:

# Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ է ընտրվել

## ՎԱՀԱՆ ԵՊՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ



Նոյեմբերի 1-ին Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ առաջնորդանիստ եկեղեցու սրահում գումարված Ֆրանսիայի հայոց թեմի թեմական պատգամավորական ժողովում կատարվեց թեմակալ նոր առաջնորդի ընտրությունը:

Առաջադրված թեկնածուների եռանուն ցանկից հիսունչորս թեմական պատգամավորներից ներկա քառասունչորսը քվեների մեծամասնությամբ Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ ընտրեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան, Մեծ Բրիտանիայի հայոց թեմի առաջնորդ Վահան եպս Հովհաննիսյանին:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից ընտրության արդյունքների հաստատումից հետո Վահան սրբազանն ստանձնեց Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդի պաշտոնը:

### Վահան եպս Հովհաննիսյան

*(կենսագրություն)*

Վահան եպս Հովհաննիսյանը ծնվել է Իրաքի Բաղդադ քաղաքում 1963 թ.: Տեղում կրթությունն ստանալուց հետո ընդունվել է Բաղդադի էլեկտրաինժեներական համալսարան եւ ավարտել այն 1985-ին:

Նույն թվականին ընդունվել է Նյու Յորքի Ս. Ներսես ճեմարան՝ միաժամանակ սովորելով նաեւ Նյու Յորքի Ս. Վլադիմիր Ուղղափառ ճեմարանում: 1989-ին ավարտել է Ս. Ներսես ճեմարանը եւ Ս. Վլադիմիր ճեմարանը եւ պաշտպանելով «Շահապիվանի ժողովը. թարգմանություն, ներածություն եւ մեկնաբանություն» թեմայով թեզը՝ ստացել մագիստրոսի աստիճան: 1987-ին ձեռնադրվել է սարկավագ:

1990-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա եւ ծառայությունը բերել Բաղդադում եւ Մոսուլում: 1991-1992 թթ. ծառայել է որպես Նյու Յորքի Ս. Խաչ եկեղեցու այցելու հոգեւոր հովիվ, 1992-1993 թթ. ՝ որպես Նյու Յորքի Ս. Վարդանանց եկեղեցու լուսարարապետ: 1993-1999 թթ. եղել է Ս. Ղեւոնդ եկեղեցու (Ֆեյեր Լոուն, Նյու Ջերսի) հոգեւոր հովիվը:

1994 թ. «Գ Կորնթացիս թուղթը Հայ Եկեղեցու գրականության մեջ» թեմայով պաշտպանել է վարդապետական թեզ եւ ստացել մասնավոր վարդապետական գավազան: Շարունակելով ուսումնառությունը՝ մասնակցել է «Ղպտական Ընթերցվածք. Թովմասի Կտակարան», «Թալմուդ եւ Ռաբբիականություն», «Իսլամ եւ Ղուրան» դասընթացներին: Ուսանել է Բրոնքս շրջանի (Նյու Յորք) Ֆորդհամի համալսարում եւ 1998 թ. ավարտել այն՝ ստանալով աստվածաշնչյան ուսումնասիրությունների դոկտորի կոչում: Պաշտպանել է ավարտաճառ՝ «Գ Կորնթացիս. Պողոսի վերադարձը քրիստոնեական ուղղափառության» թեմայով: 1999-2000 թթ. եղել է Ս. Ներսես ճեմարանի տեսչի պաշտոնակատարը: 2006 թ. «Նոր Կտակարանի պարականոն տեքստերը եւ Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը» թեմայով պաշտպանել է ծայրագույն վարդապետական թեզ՝ արժանանալով ծայրագույն վարդապետական աստիճանի: 2000-2010 թթ. եղել է Ս. Մարտիրոսաց եկեղեցու հոգեւոր հովիվը: 2008-ից առ այսօր Մայր Աթոռ Սբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի վարդապետական թեզերի քննության հանձնախմբի անդամ է: Աստվածաշնչյան գրականության հասարակության «Աստվածաշունչը Արեւելյան եւ Արեւելյան Ուղղափառ ավանդություններում» խորհրդի նախագահ է: 2006-ից Աստվածաշնչյան ուսումնասիրությունների զարգացման ուղղափառ կենտրոնի ամսագրի գլխավոր խմբագիրն է: 2009 թ. դեկտեմբերի 14-ին ընտրվել է Մեծ Բրիտանիայի հայոց թեմի առաջնորդ: 2011 թ. նոյեմբերի 6-ին, ձեռամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ստացել է եպիսկոպոսական ձեռնադրություն եւ օծում:

Վահան եպս Հովհաննիսյանը հեղինակ է տասնյակ աշխատությունների եւ հոդվածների: Դասախոսել է ուսումնական մի շարք հաստատություններում՝ Ջորջիայի դատական համալսարանում, Ս. Մարկոսի ղպտական ճեմարանում, Ս. Ներսես ճեմարանում: Անդամ է Հայագիտական ուսումնասիրությունների միջազգային միության, Քրիստոնեական պարականոն գրականության ուսումնասիրության միության, Աստվածաշնչային կաթոլիկ ընկերության, «Մատենադարանի բարեկամներ» տնօրենների խորհրդի, Ամերիկայի աստվածաբանական ուղղափառ ընկերության, Աստվածաշնչյան ուսումնասիրությունների զարգացման ուղղափառ կենտրոնի, Հայկական հետազոտությունների հասարակության, Աստվածաշնչյան գրականության հասարակության, Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիների մշտական խորհրդի, Արեւելյան հետազոտությունների ամերիկյան դպրոցի:

# Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԼՂՀ ՌԱԶՄԱՕԴԱՅԻՆ ՈՒԺԵՐԻ ԿՈՐԾԱՆՎԱԾ ՈՒՂՂԱԹԻՌԻ ԶՈՀՎԱԾ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ (24 Նոյեմբերի, 2014 թ.)

Սիրելի՛ սգակիր ժողովուրդ,

Վշտով են համակված մեր հոգիները: Մեծ ցավ էր ամենքիս համար օրեր առաջ ուսումնավարժական թռիչքի ժամանակ ադրբեջանական զինուժի կողմից դավադրաբար խոցված հայկական ուղղաթիռի անձնակազմի կորուստը:

Բոլորս մեր խոնարհումն ենք բերում զոհված մեր անմեղ զավակների հիշատակին: Կորստի ծանր պահերին միմյանց զորակցությունը սփոփանք է վշտացյալների սրտերին, ինչպես ասում է Պողոս առաքյալը. «Հայրը գթությունների եւ Աստված ամենայն մխիթարության, որ մխիթարում է մեզ մեր բոլոր նեղություններում, որպեսզի կարող լինենք մխիթարել նրանց, ովքեր ամեն տեսակ նեղությունների մեջ են» (Բ Կորնթ. 1. 3-4): Մեր սրտակցությունն ու ցավակցությունն ենք հայտնում զոհվածների ընտանիքների անդամներին, հարազատներին, մերձավորիներին ու զինակից ընկերներին:




Խստորեն դատապարտում ենք Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացը խաթարող Ադրբեջանի ռազմատենչ, սադրիչ գործողությունները, որոնց դրսեւորումը եղավ նաեւ այս ոճրագործությունը՝ հայկական ուղղաթիռի կործանումը եւ մեր օդաչուների ողբերգական մահը:

Խոցված ուղղաթիռի անձնակազմի աճյունների դուրս բերմանը բոլոր միջոցներով խոչընդոտելու Ադրբեջանի անմարդկային քայլերը, մարդասիրական եւ բարոյական համամարդկային նորմերի անտեսումը ստիպեցին Արցախի պաշտպանության բանակին դիմելու հատուկ գործողության: Այսօր մեր սրտերը համակված են ոչ միայն ցավով, այլեւ մխիթարության զգացումով, որ մեր քաջարի ու անվեհեր մարտիկները հերոսաբար կարողացան իրականացնել իրենց առաքելությունը՝ դուրս բերելով զոհված օդաչուների աճյունները:

Ադրբեջանի կողմից հրադադարի անընդմեջ խախտումները, դիվերսիոն գործողությունները, սահմանամերձ բնակավայրերի պարբերաբար գնդակոծությունները, որոնց հավելվեց այս ոճրագործությունը, լուրջ վտանգ եւ սպառնալիք են տարածաշրջանի փխրուն խաղաղության համար եւ անմեղ կյանքեր են խլում: Մեր ժողովուրդն աստվածապատվեր խաղաղության կողմնակից է եւ այսօր էլ շարունակում է ջանքեր ներդնել մեզ պարտադրված պատերազմից հետո պահպանելու թանկ գնով ձեռք բերված խաղաղությունը, քանզի աստվածապարգեւ կյանքը գերագույն արժեք է, սուրբ ու նվիրական, եւ աստվածային կամքին հակառակ են բռնություններն ու ոտնձգությունը՝ մարդկային կյանքի եւ ազատ ապրելու իրավունքի դեմ:

Սիրելի՛ սգակիր հայորդիներ, այսօր մենք միասնական աղոթակցությամբ հայց ենք բարձրացնում առ ամենակալն Աստված, որ չխաթարվի խաղաղությունը տարածաշրջանում, որ մեր ժողովուրդը հարկադրված չլինի զենքով եւ իր զավակի կյանքի թանկ գնով պաշտպանել իր ազատ ու անկախ ապրելու իրավունքը: Աղոթում ենք, որ Երկնավորի ամենախնամ Սուրբ Աջը հովանի ու պահապան լինի Հայաստան եւ Արցախ հայրենի մեր երկրին, մեր ժողովրդին՝ ի սփյուռս աշխարհի, պահապան լինի մեր բոլոր զինվորներին եւ միշտ աննկուն պահի քաջարի ոգին եւ հաղթական՝ բազուկը հայրենյաց հերոս պաշտպանների: Հայցում ենք ամենագութ Տիրոջից, որ երկնքի արքայության հավիտենական հանգրվաններում երանություն եւ հանգստություն պարգեւի լույս հոգիներին զոված հայոց արժանավոր զավակների՝ Սերգեյ Սահակյանի, Սարգիս Նազարյանի, Ազատ Սահակյանի, եւ Սուրբ Հոգու բյուր շնորհներով մխիթարի եւ սփոփի սգակիր սրտերը զոհվածների ընտանյաց անդամների, հարազատների եւ մերձավորների:

Աղոթք եւ օրհնություն մեր անմեղ հայորդիների լույս հիշատակին:

«Յիշեսցէ Տէր զհոգիս նորոգ ննջեցելոց եւ հանգուսցէ զնոսա ի լոյս երեսաց Աստուածութեան Իւրոյ. Ամէն»:

# Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ստորագրվեց պայմանագիր Հայ Առաքելական Եկեղեցու եւ ՀՀ արդարադատության նախարարության միջեւ

Նոյեմբերի 25-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում՝ «Ալեք եւ Մարի Մանուկյան» գանձատանը, օրհնությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու եւ ՀՀ արդարադատության նախարարության միջեւ ստորագրվեց պայմանագիր, որով կարգավորվելու է քրեակատարողական հիմնարկներում հոգեւոր ծառայության գործունեությունը:



Արարողությանը ներկա էին ՀՀ արդարադատության նախարար Հովհաննես Մանուկյանը, Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը, Մայր Աթոռի եկեղեցական հայեցակարգային գրասենյակի տնօրեն Բագրատ եպս Գալստանյանը, Մայր Աթոռի լուսարարապետ Հովնան եպս Հակոբյանը, վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը, քրեակատարողական հիմնարկների վարչության պետ Արթուր Օսիկյանը, ՔՀԿ հոգեւոր ծառայության սպասավորներ, ինչպես նաեւ՝ նախարարության այլ պաշտոնյայներ եւ Մայր Աթոռի միաբաններ:

Ողջույնի խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի դիվանատան Եկեղեցի-հասարակություն բաժնի տնօրեն Երեմիա աբղ. Աբգարյանը:

Այնուհետեւ այս կարեւոր իրադարձության առիթով խոսք ասաց ՔՀԿ հոգեւոր ծառայության պատասխանատու Ռուբեն աբղ. Զարգարյանը. «Զարգացման հաջորդ հանգրվան է թեւակոխում Եկեղեցի-պետություն համագործակցությունը՝ այս անգամ արդեն տարածվելով արդարադատության ոլորտի վրա: Պայմանագրի կնքմամբ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի բանտային հոգեւոր ծառայության առջեւ հնարավորության նոր հեռանկար է բացվում՝ ի նպաստ ազատազրկվածների ու նրանց ընտանիքների հոգեխնամ առաքելության արդյունավորման: ...Իրապես, Մայր Աթոռի եւ հայրենի արդարադատության փոխգործակցությունն էական նպաստ է բերելու մեր ժողովրդի կյանքում արդարության ամրապնդմանը, որ հնարավոր է միայն ճշմարտության եւ ողորմության համադրմամբ՝ ի խնդիր հասարակության ներքին խաղաղության: Լիահույս ենք, որ այս համագործակցությունն իրականություն է դարձնելու փափագելի համակարգ ունենալու այն տեսլականը, որ վերաբերում է երկու սկզբունքային առաքելություններին. մի կողմից՝ հնարավոր վտանգներից հասարակության պաշտպանությանը, մյուս կողմից՝ օրինախախտմամբ հասարակական կյանքը վտանգողների վերափոխմանը»,- նշեց հայր սուրբն իր խոսքում՝ բանտային հոգեխնամ առաքելության հանդեպ դրսեւորվող հայրական հոգածության համար շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը, ինչպես նաեւ՝ նախարարության եւ քրեակատարողական հիմնարկների վարչության պատասխանատուներին՝ ցուցաբերած զորակցության համար:

Ապա Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը եւ ՀՀ արդարադատության նախարար Հովհաննես Մանուկյանն ստորագրեցին պայմանագիրը՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ քրեակատարողական հիմնարկների հոգեւոր ծառայության գործունեության մասին:



Պայմանագրի ստորագրումից հետո շնորհավորական խոսք ասացին ՀՀ արդարադատության նախարարը եւ Մայր Աթոռի դիվանապետը՝ կարեւոր նկատելով հոգեւորականների սպասավորությունն ազատազրկման վայրերում: Վստահություն հայտնվեց, որ ՔՀԿ հոգեւոր ծառայության գործունեության իրավական ամրագրումն ու համակարգումը նոր հեռանկարներ պիտի բացեն հոգեխնամ առաքելության արդյունավետ իրագործման համար:

## Տեղեկանք

Քրեակատարողական հիմնարկներում հոգեւոր ծառայությունն սկսել է իրականացվել 1993-ից Արարատյան հայրապետական թեմում՝ առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արք. Ներսիսյանի (այժմ՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոս) օրհնությամբ:

Բանտային հոգեւոր ծառայությունն առավել համակարգված եւ նպատակային դարձնելու նպատակով 2003 թ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում բացվեց ՔԿՀ հոգեւոր ծառայության գրասենյակը: Այսօր բանտային հոգեւոր ծառայության մեջ ներգրավված է յոթ հոգեւոր սպասավոր՝ գլխավորությամբ Ռուբեն աբղ. Զարգարյանի:

Քրեակատարողական որոշ հիմնարկներում կառուցվել են եկեղեցիներ եւ մատուռներ, մնացյալներում կանգնեցվել են խաչքարեր:

Հոգեւոր ծառայության նպատակն է.

- բավարարել քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց եւ դատապարտյալների հոգեւոր, կրոնական եւ ծիսական պահանջմունքները,
- նպաստել քրեակատարողական հիմնարկներում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ապահովմանը, աջակցել դատապարտյալների ուղղման աշխատանքներին,
- բարեգործական տարբեր կազմակերպությունների հետ համագործակցելով՝ նպաստել կալանավորված անձանց եւ դատապարտյալների կեցության պայմանների բարելավմանը, նրանց ֆիզիկական, կրթամշակութային զարգացմանը,
- քրեակատարողական հիմնարկների եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու հասարակական շահագրգիռ կազմակերպությունների հետ համագործակցելով՝ նպաստել պատժի կրումից հետո անձանց հասարակական կյանքին ներգրավմանը:

# Կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների մեծարման միջոցառում Մայր Աթոռում

Նոյեմբերի 29-ին՝ Ս. Թադեոս եւ Ս. Բարդուղիմեոս առաքյալների տոնին, Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Մայր Աթոռ Սբ Էջմիածնում Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի նախաձեռնությամբ տեղի ունեցավ հայաստանյան թեմերում գործող կիրակնօրյա դպրոցների վաստակաշատ ուսուցիչների մեծարման միջոցառում:

Հրավիրյալ ուսուցիչները նախ Մայր տաճարում մասնակցեցին Պատարագին, ապա կազմակերպված ցերեկույթի շրջանակներում ՔԴԿ-ի տնօրեն Վարդան եպս Նավասարդյանի կողմից նրանց շնորհվեցին գնահատանքի գրեր: Գեղարվեստական հայտագրով հանդես եկավ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի քառաձայն երգչախումբը:

Հանդիսությունից հետո կիրակնօրյա դպրոցների ուսուցիչներն այցելեցին Մայր Աթոռ Սբ Էջմիածնի թանգարաններ:

# Եպիսկոպոսական ձեռնադրություն եւ օծում

Նոյեմբերի 16-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում, հընթացս Պատարագի, տեղի ունեցավ եպիսկոպոսական ձեռնադրություն եւ օծում: Ձեռամբ Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ եպիսկոպոսության աստիճան ստացան Բրազիլիայի հայոց թեմի առաջնորդ Նարեկ վրդ. Բերբերյանը, Կանադայի հայոց թեմի առաջնորդ Աբգար վրդ. Հովակիմյանը եւ Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան վրդ. Նավասարդյանը:

Նոյեմբերի 15-ին՝ երեկոյան ժամերգությունից առաջ, Մայր տաճարում կատարվեց ընծայացուների ուխտադրության արարողությունը, որի ընթացքում հայր սուրբերը, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցուն եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին հավատարմության իրենց ուխտը վերահաստատելով, ստորագրեցին իրենց երդմնագրերը:



Նոյեմբերի 16-ին հայրապետական Պատարագն սկսվեց Մայր տաճարի Ս. Ստեփանոս Նախասարկավագի խորանին, որտեղ կատարվեց նաեւ ընծայացուների հավատքի ուղղափառության քննությունը: Այնուհետեւ ապագա եպիսկոպոսների արժանավորության մասին Ամենայն Հայոց Հայրապետի առջեւ վկայեցին Հայ Եկեղեցու ներկայացուցիչները՝ դպիրներ, կիսասարկավագներ, սարկավագներ, քահանաներ, եպիսկոպոսներ, ինչպես նաեւ՝ հավատավոր ժողովուրդը ներկայացնող աշխարհականներ, որից հետո Պատարագը շարունակվեց Մայր տաճարի Ավագ խորանին: Որպես առընթերականներ՝ Նորին Սրբությանն սպասավորում էին Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքությունից Սահակ եպիսկոպոս Մաշալյանը եւ Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ Տաթեւ եպիսկոպոս Հակոբյանը: Ընծայացուների խարտավիլակն էր Հնդկաստանի եւ Ծայրագույն Արեւելքի հայրապետական պատվիրակ, Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Հայկազուն եպս Նաջարյանը:

Ձեռնադրության եւ օծման արարողության ավարտին եպիսկոպոսներին հանձնվեցին նաեւ իրենց եպիսկոպոսական իշխանության խորհրդանիշերը՝ եպիսկոպոսական գավազաններն ու մատանիները:

Այս բերկրալից առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրապետական պատգամն ուղղեց նորօծ եպիսկոպոսներին եւ ներկա բարեպաշտ ժողովրդին.

*«Սիրելի՛ հավատավոր զավակներ Մեր,*

*Մեծ ուրախություն եւ խնդություն ենք ապրում այսօր ամենքս: Եպիսկոպոսական ձեռնադրության եւ օծման սրբազան արարողությամբ վերստին Հոգեգալուստ է մեր Սուրբ Եկեղեցում: Հավատացյալներին բաշխվող երկնառաք պարգեւներին այսօր հավելվեցին Սուրբ Հոգու արփիափայլ, առատ շնորհները, որոնք հեղվեցին նորօծ եպիսկոպոսների հոգիներին եւ սրտերին: Այս պահին շարականագրի նման մենք եւս ձայնում ենք՝ «Ուրախ լեր, Սուրբ Եկեղեցի», որովհետեւ ընտրյալ քո սպասավորների միջից եպիսկոպոսներ են հառնում՝ հանձնառությամբ կրելու հոգեւոր տեսչի եւ առաջնորդի պատասխանատու եւ ծանր լուծը: Առաքյալը բազմիցս խոսում է եպիսկոպոսի կոչման բարձրության եւ ծառայության մեծ պատասխանատվության մասին, քանզի նրանց առաջնորդության ներքո են արդյունավորվում հոգեւորականների բարեխնամ սպասավորությունը, Սուրբ Գրքի կենարար խոսքով հավատացյալներին մատուցվող հոգեւոր սնուցումը, խրատներն ու հորդորները, Եկեղեցու վարչական գործառույթները: Եպիսկոպոսը ձեռնադրության կանոնի մեջ համարվում է զորությունների Տիրոջ այգու՝ Եկեղեցու վաստակաբեռն մշակը, որի սպասավորությամբ ծաղկում ու պտղավորվում է Եկեղեցին բազում արդյունքներով: Ինչպես քիչ առաջ ընթերցեցինք, եպիսկոպոսության պատիվը սրտի մաքրության մեջ է: «Երանի՜ նրանց, որ սրտով մաքուր են» (Մատթ. 5. 8),- ուսուցանում է Փրկիչ մեր Տերը Լեռան քարոզում: Սրտի մաքրությունն է հիասքանչ երաշխիքն աստվածտեսության: Այսպիսի աստվածատեսներ պիտի լինեն հատկապես եպիսկոպոսները՝ Տիրոջ այգու մշակները: Աստվածտեսության ճանապարհը բարի ընթացքն է, հավատավոր գործերը, եկեղեցանվեր խոնարհ ու արդյունավոր սպասավորությունն է, Քրիստոսի մշտական ներկայության ջերմ զգացողությունը, աղոթական խոկումներն են հավատացյալների հանդեպ հոգածությունն ու անմնացորդ սերը: Հավատացյալների աստվածտեսության ուղին անցնում է եպիսկոպոսի վաստակի, քարոզչության, Եկեղեցու կարգավորության, հոգեւոր ծառայության կանոնակարգման համար ներդրվող երկնահաճո ջանքերի միջով:*

*Սիրելի՛ներ, այսօր եպիսկոպոսության արժանացողները բարի վարուց վկայություններ ունեն հավատացյալ հայորդիների, թեմական վարչականների ու վկաների՝ որպես հեզ, բարեսեր, աստվածասեր, օրինապահ եւ լի խոնարհությամբ անձեր: Երեկ մեր ձեռնադրյալ եպիսկոպոսները Իջման Սուրբ Սեղանի առջեւ ծնրադրությամբ խոստացան եւ ուխտեցին հաստատակամ ընթանալ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու վարդապետության եւ պատվիրանների համաձայն, բարի սպասավորությամբ ուսուցանել եւ խրատել իրենց խնամքին հանձնված հավատացյալներին եւ որպես քրիստոսահաստատ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան՝ ամենայն ջանք գործադրել համայն հայության հոգեւոր կենտրոնի զարգացման եւ պայծառության համար:*

*Պատմության հոլովույթներում եպիսկոպոսների քաջեռանդ ու կորովի առաջնորդությամբ է մեր ժողովուրդը՝ իբրեւ Քրիստոսի Սուրբ Եկեղեցի, զարգացրել գիտություն ու մշակույթ, ստեղծել գիր ու դպրություն, կերտել վանք ու եկեղեցի, հաղթահարել դժվարին ժամանակների փորձությունները, վերապրել Հայոց ցեղասպանությունը, պահպանել մշտալույս հույսն ու հավատքը, հասել ազատ կյանքի, հայոց անկախ պետականության իր երազանքի իրականացմանը: Առաքելահաստատ մեր Սուրբ Եկեղեցին եպիսկոպոսների գլխավորությամբ ու սպասավորությամբ, վարդապետաց, քահանայից ու սարկավագաց դասի ծառայությամբ, աստվածասեր մեր ժողովրդի աջակցությամբ այսօր էլ բարվոք շարունակում է քրիստոսապատվեր իր առաքելությունը, հոգեխնամ ծառայությունը, ի սփյուռս աշխարհի ջանքեր գործադրում հայ կյանքի բարօրության ու առաջընթացի համար: Մեր հոգեւոր-եկեղեցական կյանքում բազում են մարտահրավերները: Եվ այսօր էլ մեր եպիսկոպոսները պիտի անհոգնաբեկ ջանքեր գործադրեն, որպեսզի հայորդիք առավել հաղորդակից լինեն եկեղեցական մեր սրբազան ավանդույթներին, վերարժեւորեն մեր անգին հոգեւոր ժառանգությունը, աղանդների մոլորեցնող ուսմունքների ազդեցությամբ չշեղվեն ճշմարտությունից, անսայթաք ընթանան Քրիստոսի պատվիրանների համաձայն, անխաթար պահպանեն լուսավորչահաստատ հավատքը, ապրեն քրիստոնեական, մարդկային բարձր արժեքներով: Առկա խնդիրների ու դժվարությունների հաղթահարման համար կենսականորեն կարեւոր է, որ մեր ժողովրդի զավակունք համախումբ մնան մեր Սուրբ Եկեղեցու հովանու ներքո՝ ամուր առ Աստված եւ առ Հայրենին սիրո ու նվիրումի մեջ եւ ընթանան փրկության ճանապարհներով»:*



Նորին Սրբությունը, Պատարագին մասնակից ուխտավորներին ներկայացնելով ձեռնադրյալ եպիսկոպոսներին, վերջիններիս բարեմաղթեց. *«Սիրելի՛ սրբազաններ, Մեր հորդորն ու պատգամն է, որ հաստատուն պահեք ձեր ուխտը, գործեք եւ ծառայեք մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի լույս օրինակով եւ ձեր ազգօգուտ ու եկեղեցանվեր գործերին հավելեք նորանոր ձեռքբերումներ: ...Մաղթում ենք, որ մարգարեական նախանձախնդրությամբ, առաքելական հաստատակամությամբ, Տիրոջ խոսքը մատռվակող ավետարանիչների քաջալերությամբ, մեր երանելի սուրբ հայրերի լուսաշավիղ օրինակով միշտ փութեռանդ իրականացնեք ձեր առաքելությունը, որպեսզի հավետ շեն ու պայծառ լինի Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, մխիթարությամբ սփոփվյալ՝ սրտերն ու հոգիները հավատավոր Մեր սիրելի զավակների, եւ նոր ձեռքբերումներով ու իրագործումներով զարդարվի ազգային, հոգեւոր-եկեղեցական առաջընթացը համայն աշխարհասփյուռ հայության:*

*Ի խորոց սրտի աղոթում ենք առ ամենակալն Աստված, որ երկնավոր Տիրոջ կողմից սուրբ Թադեոս եւ սուրբ Բարդուղիմեոս առաքյալների ձեռամբ հիմնադրված, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայրապետի հաստատած Հայ Եկեղեցին, որը փրկության տապանն է համայն հայության, պայծառացյալ պահեք ձեր կորովի ծառայագործությամբ: Այլեւ հայցում ենք, որ Փրկիչ մեր Տերը զորակից եւ աջակից լինի ձեզ՝ անսայթաք ընթանալու տերունապատվեր ծառայության շավիղներով, Սուրբ Հոգու առաջնորդությամբ նոր հաջողություններ հավելելու մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում տարիների ձեր վաստակին»:*

Հայրապետական պատգամից հետո բոլոր եկեղեցականները բարձրացան սուրբ խորան՝ համբուրելու նորաօծների աջը եւ նրանցից ստանալու եպիսկոպոսական առաջին «Ողջույնը»: Ս. Պատարագի ավարտին նորաօծ սրբազաններին եպիսկոպոսության կանչվելու առիթով շնորհավորեց նաեւ հավատավոր ժողովուրդը:

Ձեռնադրության արարողությանը ներկա էին Հայ Եկեղեցու թեմակալ առաջնորդներ, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միաբաններ, Բրազիլիայի եւ Կանադայի հայոց թեմերի թեմական խորհուրդների եւ եկեղեցական դասի ներկայացուցիչներ, կրթական ոլորտի ներկայացուցիչներ, բարերար հայորդիներ, ՔԴԿ եւ «Էօռնեկեան» հանրակրթական դպրոցի աշխատակիցներ եւ սաներ, ձեռնադրյալների բարեկամներ եւ բազում ուխտավորներ:

Նորաօծ եպիսկոպոսների կողմից Մայր տաճարում մատուցվեցին ուխտի Պատարագներ:

# Մայր Աթոռ Սբ Էջմիածնում

## Նարեկ եպս Բերբերյան



Նարեկ եպս Բերբերյանը (ավազանի անունը՝ Վազգեն) ծնվել է 1967 թ. հոկտեմբերի 28-ին Բեյրութում (Լիբանան): Ուսանել եւ 1981 թ. ավարտել է Բեյրութի «Վահան Թեքեյեան» վարժարանը: 1981-1987 թթ. ուսանել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում՝ պաշտպանելով ավարտաճառը՝ «Ս. Գրիգոր Տաթեւացու «Լուծմունք Յոբայ» թեմայով: 1986 թ. ձեռնադրվել է սարկավագ: 1988-1991 թթ. իր ուսումնառությունը շարունակել է Նյու Յորքի «Ս. Վլադիմիր» ուղղափառ աստվածաբանական ճեմարանում՝ ստանալով աստվածաբանության մագիստրոսի աստիճան: Միաժամանակ դաշնամուրի դասընթացների է հետեւել Նյու Յորքի Կոնկորդիայի քոլեջում:

1991-1992 թթ. ծառայել է իբրեւ Նյու Յորքի Ս. Վարդան տաճարի լուսարարապետ՝ միաժամանակ աստվածաշնչագիտական դասընթացների հետեւելով Նյու Յորքի ընդհանուր աստվածաբանական ճեմարանում՝ ստանալով Խորհրդական աստվածաբանության մագիստրոսի երկրորդ կոչումը: 1992 թ., ձեռամբ ԱՄՆ հայոց Արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա: 1992-1993 թթ. եղել է Հյուսթնի Ս. Գեւորգ եկեղեցու հովվի օգնական: 1994 թ. նշանակվում է Ռիչմոնդի Ս. Հակոբ եկեղեցու հոգեւոր հովիվ:

Նույն տարում ստացել է մասնավոր վարդապետության աստիճան:

Վիրջինիայում ծառայելու ընթացքում Միացյալ աստվածաբանական ճեմարանում շարունակել է իր կրթությունը եւ ստացել Հովվական ծառայության դոկտորի աստիճան: 2000-2002 թթ. եղել է Հարթֆորդի Ս. Գեւորգ եկեղեցու հոգեւոր հովիվը:

2003-2013 թթ. եղել է Բոքա Ռեյթոնի Ս. Դավիթ եկեղեցու հոգեւոր հովիվը:

2013 թ. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից նշանակվել է Բրազիլիայի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ: 2014 թ. ընտրվել է Բրազիլիայի հայոց թեմի առաջնորդ:

Հոգեւոր ծառայության ընթացքում Նարեկ սրբազանը դասախոսել է հոգեւոր-կրթական տարբեր հաստատություններում եւ համալսարաններում, նախաձեռնել է կրոնական եւ մշակութային մի շարք ծրագրեր:

### Նարեկ եպիսկոպոսն ուխտի Պատարագ մատուցեց Մայր տաճարում

Նոյեմբերի 17-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնի Մայր տաճարում՝ իջման սբ Սեղանի առջեւ, ընկալյալ ավանդության համաձայն, ուխտի Պատարագ մատուցեց նոյեմբերի 16-ին եպիսկոպոսական ձեռնադրության եւ օծման արժանացած՝ Բրազիլիայի հայոց թեմի առաջնորդ Նարեկ եպս Բերբերյանը:

«Կյանքս կրկին վերանորոգվում է, կրկին հոգեւոր վերածնունդ եմ ապրում եւ այս սուրբ Խորանի առաջ իմ ուխտն եմ նորոգում սբ Պատարագի մատուցմամբ՝ որպես նորաօծ եպիսկոպոս Հայ Առաքելական մեր Սբ Եկեղեցու՝ միաբան եղբայրներիս եւ հավատացյալների ներկայությամբ: Սբ Պատարագը նմանեցնում եմ Քրիստոսի պայծառակերպության կամ այլակերպության դեպքին, որտեղ մեր Տերը Թաբոր լեռան վրա պայծառակերպվեց: Այսօր մեզ համար սբ Խորանն է այդ Թաբոր լեռը, որտեղ մեր հանդիպման պահն է ստեղծվում՝ մեզ հետ խոսելու եւ մեզ այլակերպելու: Իրոք, Աստծո կամքով եւ Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ պայծառակերպության պահեր ապրեցինք եւ աղոթքի ու Սբ Հոգու երեւմամբ սրբազան Պատարագի ընթացքում ստացանք եպիկոպոսական այս սուրբ աստիճանը»,- իր եպիսկոպոսական անդրանիկ քարոզում նշեց սրբազանը:

Իր խոսքում Բարզիլիայի հայոց թեմի առաջնորդ սրբազանն ընդգծեց, որ վերադառնում է թեմ՝ մեծ խանդավառությամբ եւ վերանորոգված հոգով շարունակելու իր ծառայությունը, առավել աշխուժացնելու հոգեւոր, մշակութային ու դաստիարակչական ծրագրերը:

Աղոթք բարձրացնելով հայրենիքի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համար՝ Նարեկ եպս Բերբերյանը մաղթեց, որ Հայ Եկեղեցու մեջ շարունակվի հոգեւոր վերազարթոնքը՝ ի պայծառություն հայոց ազգի:

## Աբգար եպս Հովակիմյան

Աբգար եպս Հովակիմյանը (ավազանի անունը՝ Սամվել) ծնվել է 1972 թ. հուլիսի 23-ին ք. Բաթումիում (Վրաստան):

1979-1989 թթ. սովորել է Բաթումիի հայկական Ստ. Շահումյանի անվան միջնակարգ դպրոցում: 1989-1995 թթ. ուսանել է Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում: Ավարտաճառը պաշտպանել է «Հայ դավանաբանական մտքի արձագանքները ս. Ներսես Շնորհալու «Մատթէի մեկնութեան» մեջ» թեմայով:

1995 թ. հոկտեմբերին ձեռնադրվել է սարկավագ եւ ծառայության կոչվել Մայր Աթոռում: 1996 թ. հունիսի 2-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ համալրելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության շարքերը: 1996-2001 թթ. ծառայել է որպես Աջարիայի (Վրաստան) հոգեւոր հովիվ: 2001-2004 թթ. ուսանել է Զալցբուրգի համալսարանի աստվածաբանության ֆակուլտետում: 2004 թ. պաշտպանել է «Հայլատին եկեղեցական հարաբերությունները 11-12-րդ դարերում» թեմայով ավարտաճառը եւ վերոնշյալ համալսարանում ստացել աստվածաբանության մագիստրոսի կոչում: 2004 թ. մայիսից 2005 թ. հոկտեմբերը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ ծառայել է Վիրահայոց թեմում՝ իբրեւ փոխառաջնորդ:



2005 թ. հոկտեմբերի 11-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ նշանակվել է Սյունյաց թեմի փոխառաջնորդ: 2006 թ. ապրիլին պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Ս. Դիոնիսիոս Արիսպագացին հայ մատենագրության մեջ» թեմայով, եւ 2006 թ. ստացել մասնավոր վարդապետության աստիճան: 2010 թ. մեկամյա ուսման է մեկնել Կանադա: 2011 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ նշանակվել է Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ: 2014 թ. ընտրվել է Կանադայի հայոց թեմի առաջնորդ: Սրբազան հայրը տիրապետում է հայերեն, ռուսերեն, վրացերեն եւ գերմաներեն լեզուներին:

### Աբգար եպիսկոպոսը մատուցեց ուխտի իր Պատարագը

Նոյեմբերի 18-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում ուխտի Պատարագ մատուցեց Կանադայի հայոց թեմի առաջնորդ Աբգար եպս Հովակիմյանը:

«Նոյեմբեր 16-ին Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի այս լույս կամարների տակ, ձեռամբ ազգիս շնորհազարդ Հայրապետ Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ձեռնադրվեցինք եւ օծվեցինք, հոգեւոր եղբայրների հետ արժանացանք եպիոկոպոսական բարձր աստիճանի: Մեր կյանքի այս հանգրվանը դարձավ օր երանության, օր խնդության եւ սրբազան ուխտի»,- ասաց Աբգար սրբազանն իր քարոզում:

Սրբազան հայրը եպիսկոպոսության կանչվելու առիթով գոհություն հայտնեց Աստծուն եւ որդիական երախտագիտությունը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Աբգար եպիսկոպոսը նաեւ շնորհակալություն հայտնեց Գեւորգյան հոգեւոր ճեմարանի դասախոսական ողջ կազմին, միաբան եղբայրներին՝ իրենց աղոթակցության համար, ինչպես նաեւ՝ կանադահայոց թեմի հոգեւոր դասին եւ հավատավոր ժողովրդին՝ իր անձի հանդեպ դրսեւորած վստահության համար:

Վերջում նորաօծ եպիսկոպոսը, վերստին իր հավատարմությունը հայտնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդեպ, աղոթքով հայցեց, որ Տերը միշտ հաստատուն պահի Մայր Աթոռը եւ նրա գահակալին՝ պարգեւելով հայոց հորը երկար եւ արեւշատ օրեր:

## Վարդան եպս Նավասարդյան

Վարդան եպս Նավասարդյանը (ավազանի անունը՝ Արիստակես) ծնվել է 1976 թ. օգոստոսի 7-ին Երեւանում:

1986-1996 թթ. սովորել է Երեւանի Ն. Ստեփանյանի անվան թիվ 71 ռուսական միջնակարգ դպրոցում: 1995 թ. ավարտել է «Հայաստանի պատանեկան նվաճումներ» տնտեսագիտական եռամյա դասընթացները: 1996-1997 թթ. ուսանել է Շիրակի թեմի հոգեւոր ընծայարանում: 1997-2002 թթ. հոգեւոր ուսումնառությունը շարունակել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում: 2001 թ. ձեռնադրվել է սարկավագ: 2002-2005 թթ. Մայր տաճարում ծառայել է իբրեւ լուսարարապետի օգնական: 2003 թ. ձեռնադրվել է կուսակրոն քահանա: 2005-2008 թթ. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ ծառայության է նշանակվել Ավստրալիայի եւ Նոր Զելանդայի հայոց թեմում՝ որպես առաջնորդական փոխանորդ եւ Սիդնեյի Ս. Հարություն եկեղեցու հոգեւոր հովիվ:

2008 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ նշանակվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն:

2009 թվականից համատեղության կարգով նշանակվել է Հնդկաստանի Հայոց մարդասիրական ճեմարանի՝ Հայաստանի համակարգող եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Էօռնեկեան» հանրակրթական դպրոցի տեսուչ, 2012 թվականից՝ նաեւ Արմավիրի մարզի Արեւադաշտ գյուղի «Էօռնեկեան» մանկապարտեզի հոգեւոր տեսուչ: 2013 թ. պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Քրիստոնեական կրթության եւ արժեքների դերը երրորդ Հանրապետության տարիներին» թեմայով եւ ստացել մասնավոր վարդապետության աստիճան:



Վարդան եպս Նավասարդյանն անդամ է ՀՀ ԿԳՆ կոլեգիայի, Հանրային խորհրդի կրթության եւ գիտության ենթահանձնախմբի եւ ECLOF հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի: Հեղինակ է հոդվածների, ուսումնասիրությունների եւ հեռուստա-ռադիո հաղորդումների, համակարգել է հանրակրթական դպրոցի 5-11-րդ դասարանների Հայոց Եկեղեցու պատմություն առարկայի դասագրքերի խմբագրման աշխատանքները: 2013 թ. Հայրենասիրական դաստիարակության գործում ունեցած իր ավանդի համար ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի կողմից պարգեւատրվել է ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալով: 2014 թ. մատաղ սերնդի կրթության եւ դաստիարակության գործում ներդրած ավանդի համար ՀՀ նախագահի Ս. Սարգսյանի կողմից պարգեւատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով:

Սրբազան հայրը տիրապետում է ռուսերեն եւ անգլերեն լեզուներին:

### Վարդան եպս Նավասարդյանը մատուցեց ուխտի իր Պատարագը

Նոյեմբերի 23-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնի Մայր տաճարում ուխտի սուրբ Պատարագ մատուցեց Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան եպս Նավասարդյանը:

Ս. Պատարագի արարողության ընթացքում Վարդան սրբազանը եպիսկոպոսության կանչվելու կապակցությամբ իր որդիական երախտագիտությունը հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ միաժամանակ շնորհակալություն հայտնելով Գեւորգյան հոգեւոր ճեմարանում իրեն դասավանդած ողջ դասախոսական կազմին ու Մայր Աթոռի միաբաններին:

«Աստծո կամոք, Սուրբ Հոգու ներշնչմամբ եւ առաքելական հաջորդականության ձեռնադրության եւ օծման խորհրդով Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ Հայրապետի աջի զորությամբ կոչվեցինք Աստծո այգու՝ այս տնտեսության մեջ, ծանրագույն եւ պատասխանատու այս աստիճանին՝ Տիրոջ բարի լուրի խոսքը բերելու եւ հասցնելու հավատացյալ մեր ժողովրդին, կոչվեցինք քրիստոնեական հավատքը կյանքի փոխելու եւ այդ կյանքը համակ ծառայության վերածելու: Զգում եւ գիտակցում եմ այս լծի ծանրությունն իմ տկար ուսերին, սակայն, «Ո՜վ Տեր, ցո՛ւյց տուր ինձ Քո ճանապարհները եւ Քո շավիղներն ինձ սովորեցրո՛ւ, առաջնորդի՛ր ինձ, Տե՛ր, Քո ճշմարտության մեջ եւ ուսուցանի՛ր հանապազ», քանզի Դու ես հարուցյալ Փրկիչը եւ Աստված իմ: Տե՛ր, ցո՛ւյց տուր ինձ այն ճանապարհը, որ ծառայությամբ եւ պատասխանատվությամբ կարող է քաղցրանալ եւ քաղցրացնել այն լուծը, որը մարդկայնորեն անհնար է թվում միայնակ տանելու…»,- մասնավորապես ասաց նորաօծ Վարդան սրբազանը:

# «Լավագույն ուսուցիչ» մրցանակաբաշխություն Մայր Աթոռ Սբ Էջմիածնում

Նոյեմբերի 25-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ տեղի ունեցավ «Լավագույն ուսուցիչ» ամենամյա հանրապետական մրցույթի 2014 թվականի հաղթողների մրցանակաբաշխության հանդիսությունը:

Մրցույթն իրականացվում է ՀՀ կրթության ու գիտության նախարարության եւ Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի համատեղ ջանքերով՝ հովանավորությամբ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի:

Ողջունելով մրցանակաբաշխության առիթով Հայաստանի տարբեր մարզերից Մայր Աթոռ ժամանած ուսուցիչներին՝ Վարդան եպիսկոպոսն անդրադարձավ Վեհափառ Հայրապետի կողմից մրցույթի հաստատման կարեւորությանը եւ ուսուցչի մարդակերտման ծառայության խորհրդին: «Եկեղեցու եւ Վեհափառ Հայրապետի այս մրցանակը, ինչպես վկայում են այս մրցանակին արժանացած ուսուցիչները, Հայոց Հայրապետի ձեռքից նվեր ստանալը եւ վկայված լինելը՝ իբրեւ այդ տարվա լավագույնը, հոգեւոր մեծ խորհուրդ ունի: Մեզ համար այդ խորհրդի արմատը հինգերորդ դարն է՝ Թարգմանչաց շրջանը, որտեղից սկսվեց հայկական ազգային դպրոցը, տարածվեց, զարգացավ, եւ այսօր դուք, սիրելի՛ մանկավարժներ, հետնորդներն եք հոգեւոր այդ հսկա ժառանգության: Եվ այսօր եկել ենք, հավաքվել ենք Հայոց Հայրապետի կողքին, որպեսզի նորոգենք մեր այն գիտակցությունը, որ ուղղված է դեպի մարդը, մարդուն դաստիարակելու եւ կրթելու այդ վեհ եւ մշտապես գնահատելի առաքելությունը»,- նշեց ՔԴԿ-ի տնօրենը:



Վարդան սրբազանը սերունդների հոգեւոր դաստիարակությանը, ճշմարիտ արժեքների սերմանմանը միտված ծրագրերի նկատմամբ ցուցաբերվող ուշադրության եւ հոգածության համար շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին, ինչպես նաեւ՝ ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանին եւ նախարարության անձնակազմին:

Հանրապետական մրցույթի արդյունքներն ամփոփեց ՀՀ ԿԳ փոխնախարար Կարինե Հարությունյանը: Ուսուցիչներին շնորհավորեց նաեւ ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Կարինե Աճեմյանը:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հաղթող ուսուցիչներին հանձնվեցին մրցույթի մասնակցության վկայականներ, հոգեւոր գրականություն եւ դրամական պարգեւներ:

Առաջին մրցանակի արժանացան Հայոց պատմության ուսուցչուհի Հերմինե Սիմոնյանը (ՀՀ Շիրակի մարզ, Գյումրու թիվ 3 ա/դ), հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի Մարինե Մորիկյանը (ՀՀ Արագածոտնի մարզ, Ուջանի մ/դ) եւ ֆիզիկայի ուսուցիչ Խաժակ Նավասարդյանը (ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սեւանի թիվ 3 հ/դ):

Երկրորդ մրցանակ ստացան Հայոց պատմության ուսուցչուհի Նադյա Սիմոնյանը (ՀՀ Վայոց ձորի մարզ, Վայքի ա/դ), Հայոց Եկեղեցու պատմության ուսուցչուհի Սուսաննա Նիկողոսյանը (ՀՀ Կոտայքի մարզ, Լեռնանիստի մ/դ), հայոց լեզվ եւ գրականության ուսուցչուհի Նարինե Գոգչյանը (ՀՀ Լոռու մարզ, Շահումյանի մ/դ), հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի Սանամ Մարգարյանը (ՀՀ Վայոց ձորի մարզ, Եղեգնաձորի ա/դ), քիմիայի ուսուցչուհի Մարիամ Դեմիրճյանը (Երեւան, թիվ 56 հ/դ), կենսաբանության ուսուցչուհի Վանուհի Նիկողոսյանը (ՀՀ Վայոց ձորի մարզ, Ջերմուկի ա/դ), դասվար Գայանե Դանիելյանը (ՀՀ Կոտայքի մարզ, Հրազդանի թիվ 7 մ/դ) եւ դասվար Մանուշակ Մելքումյանը (ՀՀ Արարատի մարզ, Նորաբացի մ/դ):

Երրորդ մրցանակ տրվեց Հայոց պատմության ուսուցչուհի Նաիրա Ղարիբյանին (ՀՀ Կոտայքի մարզ, Հրազդանի թիվ 2 հ/դ), Հայոց պատմության ուսուցչուհի Հռիփսիմե Մովսիսյանին (ՀՀ Գեղարքունիքի մարզ, Գավառի թիվ 5 հ/դ), Հայոց պատմության ուսուցչուհի Փառիկ Նաղդալյանին (ՀՀ Արարատի մարզ, Փ. Վեդու թիվ 1 մ/դ), Հայոց Եկեղեցու պատմության ուսուցչուհի Լուսինե Գեւորգյանին (ՀՀ Շիրակի մարզ, Գյումրու թիվ 5 հ/դ), Հայոց Եկեղեցու պատմության ուսուցչուհի Հեղինե Արշավիրյանին (ՀՀ Վայոց ձորի մարզ, Զառիթափի մ/դ), Հայոց Եկեղեցու պատմության ուսուցչուհի Լենա Շահվերդյանին (ՀՀ Լոռու մարզ, Թումանյանի մ/դ), հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի Անժելա Սիմոնյանին (ՀՀ Գեղարքունիքի մարզ, Գավառի թիվ 4 հ/դ), հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի Գոհար Մուրադյանին (ՀՀ Տավուշի մարզ, Բերդավանի մ/դ), հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի Լուսինե Գրիգորյանին (ՀՀ Սյունիքի մարզ, Կապանի թիվ 2 ա/դ), ֆիզիկայի ուսուցչուհի Նարինե Խաչատրյանին (ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյանի թիվ 1 հ/դ), կենսաբանության ուսուցչուհի Զոյա Գրիգորյանին (ՀՀ Արարատի մարզ, Մասիսի թիվ 5 ա/դ), ֆիզիկայի ուսուցչուհի Ծովինար Մխիթարյանին (ՀՀ Տավուշի մարզ, Սեւքարի մ/դ), դասվար Արեւ Բալայանին (Երեւան, թիվ 162 հ/դ) եւ դասվար Լիլիթ Խառատյանին (ՀՀ Լոռու մարզ, Ազնվաձորի մ/դ):

Մրցանակաբաշխությունն ամփոփվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամով եւ օրհնությամբ: Նորին Սրբությունը խորհրդանշական նկատեց, որ մրցանակաբաշխությունն անց է կացվում Մայր Աթոռում, որտեղ հաստատվել եւ գործել է ազգային առաջին կրթական հաստատությունը, առաջին դպրոցը, ուր մանկավարժի, ուսուցչի պատվավոր աշխատանքն են իրականացրել Սահակ Պարթեւ Հայրապետը եւ Մեսրոպ Մաշտոց Վարդապետը: *«Նրանք կրթել եւ հասցրել են լուսավորյալ մի սերունդ, ովքեր բեկում են մտցրել ազգային մեր կյանքում, կրթական գործի մեջ: Այդ սերունդը մենք կոչում ենք Թարգմանչաց սերունդ՝ լուսավոր, փառապանծ, հպարտություն ներշնչող անուններ մեր ժողովրդի զավակաց համար: Նրանք ներշնչվել են իրենց ծառայագործության մեջ իրենց մեծ Վարդապետի, մեծ Ուսուցչի կերպարով, Անձով, որ է մեր Տեր Հիսուս Քրիստոսը: Հիսուս Քրիստոսն Իր հետեւորդների կողմից ընկալվել եւ բնորոշվել է որպես Ուսուցիչ, որպես Վարդապետ, ով ուսուցանել է Իր վարդապետությունը, կրթել Իր հետեւորդներին՝ առակներով, օրինակներով: Եվ ավետարանիչը, անդրադառնալով մեր Տիրոջ գործունեությանը, բնորոշում է Նրան հետեւյալ կերպ. ամեն ոք զարմանում էր Տիրոջ խոսքի ուժից, որովհետեւ Նա հեղինակությամբ էր ուսուցանում: Կարեւոր է այս պարագան, որ ցանկանում ենք բերել ձեր յուրաքանչյուրիդ ուշադրությանը. հեղինակությամբ ուսուցանել: Իսկ ո՞ր պարագայում է, որ մենք կարող ենք հեղինակությամբ ուսուցանել: Ոչ միայն մեր գիտելիքների առատությամբ, ոչ միայն մեր ունեցած ինքնավստահությամբ, այլ երբ մեր խոսքը նույնական է մեր գործի հետ, երբ տարբերություն չկա մեր խոսքի եւ գործի մեջ»,-* ասաց Նորին Սրբությունը՝ կարեւորելով ուսուցչի օրինակելի կերպարը:

*«Մենք բոլորս՝ այստեղ նստած, եղել ենք աշակերտներ: Ունեցել ենք մեր ուսուցիչները, եւ ամենքս ինչ աստիճանի, ինչ դիրքի, ինչ հմտությունների որ տեր ենք դարձել, բոլորս էլ երախտապարտ ենք մեր ուսուցիչներին, որոնք կրթել, դաստիարակել են մեզ: Սակայն բոլորս էլ մեր կյանքում ներշնչվել ենք այն ուսուցչով, ով իր խոսքը նույնականացրել է իր գործի հետ: Նրանով ներշնչվել ենք, նրան սիրել ենք, նրան ընդօրինակել ենք: Ես պիտի ցանկամ, որ դուք այդպիսի ուսուցիչներ լինեք ձեր աշակերտների համար՝ սիրված, մեծարված եւ օրինակելի: Օրինակելի՝ ձեր խոսքով, ձեր գործով: Ուսուցչի անձի մեջ, ուսուցչի շուրթերից Աստված պետք է խոսի, որպեսզի երեխաներ կրթվեն, դաստիարակվեն Աստծո պատվիրանների ու պատգամների համաձայն, բարոյական արժեքները հիմը դարձնեն իրենց կյանքի, որոնց վրա եւ խարսխեն մեր ազգային կյանքը: Այդպես է, որ մենք պիտի կարողանանք ունենալ զորեղ պետություն, զորեղ ընտանիք եւ հասարակություն: Եվ օրհնյալ պիտի լինի ազգային մեր կյանքը»,-* պատգամեց Վեհափառ Հայրապետը:



Շնորհավորելով մրցանակակիր ուսուցիչներին՝ իրենց կատարած ազգանվեր, աստվածահաճո գործի համար՝ Հայոց Հայրապետն ընդգծեց, որ մանուկների կրթությունը տերունաշնորհ ծառայագործություն է, եւ մաղթեց Աստծո օրհնությամբ շարունակել ազգի, Եկեղեցու եւ հայրենիքի համար արժանավոր զավակներ կերտելու պատասխանատու առաքելությունը:

Նորին Սրբությունը նաեւ իր գնահատանքը հայտնեց ՔԴԿ-ի տնօրեն Վարդան եպիսկոպոսին եւ կենտրոնի աշխատակիցներին, ինչպես նաեւ ՀՀ ԿԳ նախարարությանը՝ հորդորելով ուրախության, հպարտության զգացումով իրականացնել իրենց կարեւոր ծառայությունն ազգային կյանքում:

Հանդիսության ընթացքում կատարումներով ելույթ ունեցավ «Սաղմոսերգու» հոգեւոր երաժշտության արական երգչախումբը՝ խմբավարությամբ Վահե Բեգոյանի:

## Զորակցություն սիրիահայերին եւ անապահով ընտանիքներին

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի սոցիալական ծառայությունը, «Աջակցության կարիքավոր եւ անապահով ընտանիքներին» ծրագրի շրջանակներում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծման եւ գահակալության 15-ամյակի առիթով նոյեմբերի 4-19-ը նյութական օգնություն ցուցաբերեց Հայաստանում ապաստան գտած 150 սիրիահայ ընտանիքի:

Նույն ծրագրի շրջանակներում դրամական եւ նյութական օգնություն է հատկացվել ՀՀ տարբեր մարզերից 70 առավել անապահով բազմազավակ ընտանիքի, ուսանողի, հաշմանդամի եւ միայնակ մոր:



## Ի Տեր հանգավ
## Տ. Տաթեւ արք. Ղարիբյանը

Խոր ցավով տեղեկացնում ենք, որ նոյեմբերի 26-ին Սան Պաուլոյում (Բրազիլիա), կյանքի 77-րդ տարում, վախճանվել է Մայր Աթոռ Սբ Էջմիածնի երիցագույն միաբաններից Տաթեւ արք. Ղարիբյանը՝ երիկամի փոխպատվաստումից հետո զարգացած երիկամային անբավարարությունից:

1980 թվականից սկսյալ լինելով Բրազիլիայի հայոց թեմի առաջնորդը՝ Տաթեւ արք. Ղարիբյանն առողջական խնդիրների պատճառով առաջնորդական պաշտոնը թողել էր անցյալ տարի:

Բազմավաստակ սրբազան հոր վախճանը մեծ կորուստ է Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու եւ նրա հավատավոր զավակների համար:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Գերագույն հոգեւոր խորհուրդը եւ Հայ Եկեղեցու ողջ հոգեւորականաց դասը սգում են բարեհիշատակ սրբազան հոր մահը:

Նոյեմբերի 27-ին Սան Պաուլոյում կատարվեցին Տաթեւ արք. Ղարիբյանի վերջին օծման կարգը եւ հուղարկավորության արարողությունը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից շրջաբերական էր առաքվել թեմակալ առաջնորդներին՝ թեմերի առաջնորդանիստ եկեղեցիներում կատարելու հոգեհանգստյան պաշտոն՝ բարեհիշատակ եւ բազմավաստակ Տաթեւ սրբազանի հոգու խաղաղության համար:

«Յիշատակ արդարոյն օրհնութեամբ եղիցի»:

# Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մեկնարկեց ռուս-հայկական թանգարանային ֆորումը



Նոյեմբերի 21-ին, օրհնությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում մեկնարկեց «Ռուսաստանի եւ Հայաստանի թանգարանները» ռուս-հայկական թանգարանային ֆորումը՝ կազմակերպված ՌԴ եւ ՀՀ մշակույթի նախարարությունների համատեղ ջանքերով:

Ֆորումը բացվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանի խոսքով: Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցելով ֆորումի մասնակիցներին՝ Նաթան արքեպիսկոպոսը կարեւորեց նման ձեռնարկների իրականացումը, որոնք օգտակար են փոխճանաչողության, ինչպես նաեւ՝ թանգարանային ոլորտում առկա խնդիրների վերհանման եւ համատեղ հաղթահարման տեսանկյունից: Սրբազանը նաեւ վստահությամբ ընդգծեց, որ ֆորումը կնպաստի ժողովուրդների բարեկամության առավել ամրապնդմանը եւ նոր համագործակցությունների խթան կհանդիսանա:

Ֆորումի գումարումը ողջունեցին նաեւ ֆորումի համակարգողներ ՀՀ մշակույթի փոխնախարար Արեւ Սամուելյանը եւ ՌԴ մշակույթի փոխնախարար Ելենա Միլովզորովան:

Ֆորումի շրջանակներում Մայր Աթոռում կազմակերպված առաջին կլոր սեղանը նվիրված էր մշակութային ժառանգության պահպանության արդի հիմնահարցերին: Այս նյութի շուրջ «Հայաստանի հոգեւոր մշակույթի պահպանությունը. պետության եւ Եկեղեցու համագործակցության փորձ» թեմայով զեկույց ներկայացրեց Մայր Աթոռ Սբ Էջմիածնի թանգարանների եւ արխիվի տնօրեն Ասողիկ քահանա Կարապետյանը:

Առաջին նիստի ավարտին ֆորումի մասնակիցներն այցելեցին Մայր Աթոռի թանգարաններ՝ ծանոթանալու Հայ Եկեղեցում պահպանվող հոգեւոր-մշակութային արժեքներին:

# ԱՊՀ եւ Մերձբալթյան երկրների ազգային լրատվական գործակալությունների ղեկավարների այցը Մայր Աթոռ

Նոյեմբերի 24-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածին այցելեցին Հայաստանում կայանալիք ԱՊՀ-ի պետական լրատվական գործակալությունների ղեկավարների խորհրդի նիստի եւ Մերձբալթյան երկրների ազգային լրատվական գործակալությունների ասոցիացիայի խորհրդաժողովի մասնակիցները՝ ուղեկցությամբ «Արմենպրես» լրատվական գործակալության տնօրեն Արամ Անանյանի:

Հյուրերին ընդունեց Մայր Աթոռ Սբ Էջմիածնի եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակի տնօրեն Բագրատ եպս Գալստանյանը՝ ողջունելով հյուրերի այցը համայն հայության հոգեւոր կենտրոն, եւ նրանց փոխանցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույններն ու օրհնությունը:

Բագրատ սրբազանը կարեւորեց նման խորհրդաժողովների անցկացումը, որոնք հնարավորություն են ընձեռում ոչ միայն ընդլայնելու լրատվական գործակալությունների միջեւ փոխհամագործակցությունը, այլեւ այս բարդ ու դժվարին ժամանակներում դառնալու խաղաղության տարածման յուրօրինակ քարոզիչներ: «ԶԼՄ-ներում կա խոր հոգեւոր շերտ, եւ այդ իմաստով նրանց առաքելությունն է նաեւ ճշմարտության քարոզչությունը, ճիշտ խոսքի փոխանցումը: Ձեր համագործակցությունը կարող է խաղաղություն երաշխավորել աշխարհում»,- նշեց սրբազան հայրը՝ ընդգծելով, որ ԶԼՄ-ներն ունեն նաեւ աշխարհը բարեփոխելու կարեւոր առաքելություն:

Հյուրերը Մայր Աթոռում այցելեցին նաեւ Մայր տաճարի թանգարան:

# Ս. Թադեոս եւ Ս. Բարդուղիմեոս առաքյալների տոնին դուրս բերվեց աստվածամուխ սուրբ Գեղարդը

Նոյեմբերի 29-ին Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցին տոնախմբեց Ս. Թադեոս եւ Ս. Բարդուղիմեոս առաքյալների տոնը: Առաջին լուսավորիչների բերկրառատ տոնին Մայր տաճարում մատուցվեց Պատարագ:

Այս առիթով Մայր տաճար բերվեց սուրբ Գեղարդը, որով հնարավորություն ընձեռվեց ուխտավորներին երկրպագելու եւ հրաշագործ սուրբ Գեղարդից ստանալու բաշխվող օրհնությունն ու շնորհները: Ս. Գեղարդը Միածնաէջ տաճարում մնաց մինչեւ նույն օրվա երեկոն:

Ի գոհացումն բարեպաշտ հայորդիների ու օտարազգի ուխտավորների՝ ս. Պատարագի ընթացքում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական սրբատառ կոնդակով Հայոց Եկեղեցու հիմնադիրներ Ս. Թադեոս եւ Ս. Բարդուղիմեոս առաքյալների տոնը հռչակվեց աստվածամուխ սուրբ Գեղարդի ուխտի օր:





## Տեղեկանք

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բազմաթիվ սրբություններից ու մասունքերից մեկն աստվածամուխ սուրբ Գեղարդն է, որով նաեւ օրհնվում է Հայոց Եկեղեցու սրբալույս մյուռոնը:

Աստվածամուխ սուրբ Գեղարդն այն նիզակի ծայրն է, որով հռոմեացի զինվորը խաչի վրա խոցեց մեր Տեր Հիսուս Քրիստոսին: Այդ մասին Ս. Ավետարանը վկայում է. «Երբ եկան Հիսուսի մոտ եւ տեսան, որ Նա արդեն մեռած էր, Նրա սրունքները չկոտրեցին, այլ զինվորներից մեկը տեգով խոցեց Նրա կողը, եւ իսկույն արյուն եւ ջուր ելավ» (Հռոմ. 19:33-34):

Ըստ եկեղեցական ավանդության՝ տերունի այս սրբությունն առաջին դարում Հայոց աշխարհ է բերել Քրիստոսի 12 աշակերտներից ս. Թադեոս առաքյալը: Համաքրիստոնեական այդ սրբությունը դարեր շարունակ պահվել է պատմական Հայաստանի տարբեր վանքերում, իսկ 13-րդ դարից՝ Այրիվանքում, որը հետագայում, ի պատիվ ս. Գեղարդի, վերանվանվել է Գեղարդավանք:

18-րդ դարի երկրորդ կեսին ս. Գեղարդը բերվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եւ մինչ օրս պահվում է համայն հայության հոգեւոր կենտրոնում:

Համաձայն պատմական տեղեկությունների՝ աստվածամուխ ս. Գեղարդն իր հրաշագործ զորությամբ փարատել է հոգեկան ու մարմնական հիվանդություններ: Եվ այդ նպատակով 18-19-րդ դդ. ընթացքում այն մի քանի անգամ տարվել է Հայաստանի տարբեր գավառներ, ինչպես նաեւ ուղարկվել է Թբիլիսի (Վրաստան):

***Լրատվական նյութերը՝***
***ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ***
***ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ***

# Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ կատարվել են Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միաբանների եւ նորաօծ քահանաների նշանակումներ.

Անդրանիկ աբեղա Գեւորգյանը, ազատվելով Գեղարքունյաց թեմում հոգեւոր սպասավորությունից, ծառայության է կոչվել Կոտայքի թեմում: Ահարոն աբեղա Շահվերդյանը, ազատվելով Քահանայից պատրաստման լսարանում ստանձնած իր պարտականություններից, նշանակվել է Բանակի հոգեւոր առաջնորդության կառույցի մեջ ստեղծված Երկրապահ կամավորականների միության հոգեւոր սպասավորության պատասխանատու: Նշան քահանա Ալավերդյանը ծառայության է կոչվել Արարատյան հայրապետական թեմում, Խաչեր քահանա Հարությունյանը՝ Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմում, Շնորհք քահանա Շահինյանը՝ Ուկրաինայի հայոց թեմում, Տարոն քահանա Հունանյանը՝ Գեղարքունյաց թեմում, Պողոս քահանա Միքայելյանը՝ Բուլղարիայի հայոց թեմում, Կորյուն քահանա Մաթեւոսյանը՝ Շիրակի թեմում, Մամբրե քահանա Հմայակյանը՝ Իրաքի հայոց թեմում, Տաճատ քահանա Ինջիղուլյանը՝ Արմավիրի թեմում, Ղազար քահանա Թորոսյանը՝ Գուգարաց թեմում, Ներսես քահանա Արշակյանը՝ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմում, Սարգիս քահանա Սարգսյանը՝ Արագածոտնի թեմում, Ղեւոնդ քահանա Թոփաշյանը՝ Վիրահայոց թեմում, եւ Սմբատ քահանա Աբրահամյանը՝ Տավուշի թեմում:

# ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄԸ ՆՈՐ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎ
## XX ԴԱՐ

*Սկիզբը՝ թիվ 13-17, 20-21*

Նաիրի Զարյանը համանման հոդվածներով հանդես է գալիս Մկրտիչ Արմենի («Փայլուն սրախաղություն», բայց ոչ բուն ճակատամարտ», ԳԹ, 1936, թիվ 11, 30 ապրիլ), Ակսել Բակունցի («Նացիոնալիստը խորհրդային գրողի դիմակով», ԳԹ, 1936, թիվ 19, 25 օգոստոս) դեմ, Վահրամ Թերզիբաշյանն իր հերթին է քննադատում Բակունցին («Հակահեղափոխական նացիոնալիստների գրական հնարները», ԳԹ, 1936, թիվ 22, 12 հոկտեմբեր): Զարյանը Բակունցին ծանր մեղքեր է վերագրում, «Խանջյանի լակեյներ» է համարում Դրաստամատ Տեր-Սիմոնյանին, Վահրամ Ալազանին, Վաղարշակ Նորենցին, Վահան Թոթովենցին, Գուրգեն Մահարուն, Գուրգեն Վանանդեցուն, Խորեն Սարգսյանին, Սուրեն Հարությունյանին: Նաիրի Զարյանի հիշած այս եւ մյուս բոլոր անունները ենթարկվեցին քաղաքական հալածանքների՝ կա՛մ գնդակահարվեցին, կա՛մ աքսորվեցին:

Քննադատական մերկացումների այս ալիքը գլխավորում է Հայաստանի ՀԿ(բ)Կ Կենտկոմի նոր՝ առաջին քարտուղար Ամատունի Վարդապետյանը կամ, ինչպես ինքն էր ստորագրում՝ վախենալով «վարդապետ» հիշեցնող ազգանունից, Ամատունին, ով Խանջյանին պիտակավորում է որպես «նացիոնալուկլոնիստ, սպեցիֆիկների վիժվածք» եւ քաղաքական ծանրագույն մեղադրաքներ հասցնում հայ գրողներից շատերին՝ առաջին հերթին Բակունցին, Մահարուն, Չարենցին, Թոթովենցին եւ ուրիշների (տե՛ս ԳԹ, 1936, թիվ 12, 18 մայիս): Հերթական մի գրոհի ժամանակ, որ կոչվում է պայքար «ֆորմալիզմի» դեմ, խորացված քննադատության են ենթարկվում Չարենցի «Երկիր Նաիրի», Զորյանի «Մի կյանքի պատմություն» վեպերը, Բակունցի «Կյորես», Արմենի «Հեղնար աղբյուր», Մահարու «Մանկություն», «Պատանեկություն» վիպակները (տե՛ս նույն տեղում): Քաղաքական լարվածությունը հասնում է գագաթնակետին:

Սկսվում են զանգվածային բռնությունները: «Ջարդել», «հողմացրիվ անել», «փոշիացնել», «գնդակահարել», «տրոցկիստ», «հակահեղափոխական», «նացիոնալիստ», «դաշնակցական» արտահայտությունները միասին դառնում են «ժողովրդի թշնամի», եւ բանտերը լցվում են անմեղ կալանավորներով:

«Միշտ բարձր պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշը» խմբագրականում հայ գրողներից շատերը վերստին համարվում են «նացիոնալիզմի տիպիկ ներկայացուցիչներ», իբր, Խանջյանի հովանավորությամբ «հրապարակ են շպրտվել մի շարք բացարձակ նացիոնալիստական աշխատություններ», բանը հասնում է «զոոլոգիական նացիոնալիզմ» արտահայտությանը, որով, իբր, առաջին հերթին տառապում էին Բակունցն ու Թոթովենցը (տե՛ս նույն տեղում): «Նացիոնալիստ գրչակների հոգեորդի» է հռչակվում Խաչիկ Դաշտենցը: Նկատի ունենալով նրա «Բոց» (1936) ժողովածուն՝ հոդվածագիրը շարունակում է. «Բոցում» լպիրշության է հասնում հակահեղափոխական, բակունցյան <...> վերաբերմունքը <...>: Նա գովերգում է Արագածն ու Արարատը, որոնց ստվերները դրոշ են երիտասարդ նացիոնալիստի համար»: Եվ ամփոփումը. «...այս գիրքը տրոցկիստական նացիոնալիստական գրական վիժվածք է» (Հ. Քոչար, «Նացիոնալիստ տականքների հոգեորդին», ԳԹ, 1937, թիվ 6, 28 փետրվար):

*Շարունակությունը՝ էջ 8*

# ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄԸ ՆՈՐ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎ

*Սկիզբը՝ էջ 7*

«Նացիոնալիզմը» փոխարինում է պարզ հայրենասիրությանը եւ համարվում մահացու մեղք: Նույն դիրքերից այս անգամ արդեն Գեւորգ Աբովը վերստին սուր է ճոճում Բակունցի «Ծիրանի փողը» պատմվածքի դեմ. «Նացիոնալիստ դաշնակ Բակունցն իր «Ծիրանի փողը» պատմվածքում հակադրում է, այսպես կոչված, Թուրքահայաստանը ներկա Խորհրդային Հայաստանին, կոչ է անում վերադառնալ այդ երկիրը...» (Գ. Աբովի ելույթը ԽՍՀՄ ԳՄ վարչության 4-րդ լիագումար նիստում, ԳԹ, 1937, թիվ 7, 20 մարտ):

Նույն դիրքերից «նացիոնալիստ-տրոցկիստ» է հռչակվում Հարություն Սուրխաթյանը (տե՛ս Հ. Մամիկոնյան, «Նացիոնալիստական տրոցկիստական գրականության դրոշակակիրը», ԳԹ, 1937, թիվ 10, 8 ապրիլ):

ՀԿ(բ)Կ 10-րդ համագումարի հաշվետու զեկուցման մեջ նշված հայ գրողներին դարձյալ նացիոնալիզմի մեղադրանքով դաժան քննադատության է ենթարկում Կենտկոմի առաջին քարտուղար Ամատունին («Հայաստանի խորհրդային գրականությունը եւ արվեստը», ԳԹ, 1937, թիվ 18, 12 հունիս): Կուսակցական գրական գործի այն ծայրին Մարտունին էր՝ հա՛յը, ով պիտի կոչվեր սպեցիֆկ, այս ծայրին՝ Ամատունին՝ կամակատար բոլշեւի՛կը, որն այլ բան չէր, քան ֆաշիստը: 15 տարվա ընթացքում բոլշեւիզմը, իրենց իսկ բառերով ասած, դարձավ ժողովրդի իսկական թշնամի: Բոլշեւիկների ջարդարարական քննադատությունը նոր անունների ներգրավմամբ է՛լ ավելի է ուժեղանում 1937 թ. ապրիլի 17-21-ին հրավիրված՝ Հայաստանի խորհրդային գրողների ընդհանուր ժողովում (տե՛ս «Հայաստանի խորհրդային գրողների ընդհանուր ժողովը», 1937, թիվ 12, 23 ապրիլ): Մեղադրանքների տարափն օրըստօրե ընդլայնվում է: Մեղադրում էին Գ. Աբովը, Հ. Սիրասը, Մ. Արազին, Մ. Կորյունը, Վ. Գրիգորյանը, Ռ. Զարյանը, Հռ. Պողոսյանը, Վեսպերը, Հ. Քոչարը, Ս. Սողոմոնայնը, Ս. Վահունին, Դ. Դեմիրճյանը, Ա. Ոսկերչյանը, Հ. Մելիքյանը, Ա. Վշտունին եւ ուրիշներ: Վ. Կիրպոտինը քննադատվող հայ գրողներին հռչակում է որպես վնասարարներ, միջազգային կապիտալի գործակալներ, դաշնակցականներ, տրոցկիստներ, հակահեղափոխականներ: Մեղադրվում էին Ե. Չարենցը, Ա. Բակունցը, Գ. Մահարին, Վ. Թոթովենցը, Զ. Եսայանը, Խ. Դաշտենցը, Հ. Սուրխաթյանը, Դ. Տեր-Սիմոնյանը, Է. Չոփուրյանը, Ե. Չուբարը, Պ. Մակինցյանը, արդեն նաեւ՝ Գ. Վանանդեցին, Վ. Ալազանը, Վ. Նորենցը:



Այս նիստերում իրենց գրական ընկերներին մեղադրում են նաեւ այնպիսիները, ովքեր իրենք ընդամենը կարճ ժամանակ հետո պիտի ենթարկվեին համանման քննադատության՝ Ն. Դաբաղյան, Հ. Գյուլիքեւխյան, Ս. Հակոբյան, Մ. Արմեն, Խ. Սարգսյան, Ա. Ինճիկյան:

Մի նոր հոդվածով եւ ժամանակին բնութագրական թունավոր զրպարտություններով հանդես են գալիս Ա. Ոսկերչյանը («Ընդդեմ բուրժուական նացիոնալիզմի գրականության մեջ», ԳԹ, 1937, թիվ 32, 33. 24, 31 հոկտեմբեր), Ասատուր Ասատրյանը (Աս. Վեն, «Հակահեղափոխական մաքսանենգություն մանկական գրքի անվան տակ», ԳԹ, 1937, թիվ 32, 24 հոկտեմբեր), Ցական Շողենցը («Դաշնակցական վիժվածքը», ԳԹ, 1937, թիվ 33, 31 հոկտեմբեր), Անուշավան Մակարյանը («Մինչեւ վերջ մերկացնել նացիոնալ-բուրժուական գրականության վնասարար հետքերը», ԳԹ, 1938, թիվ 3, 18 հունվար): Մեղադրական դաժան հոդվածներով հանդես են գալիս նաեւ ուրիշները՝ անգամ ժողովրդի կողմից հետագայում անհարկի մեծարված մարդիկ:

Այն Կիրպոտինը, ով Չարենցին համարեց ժողովրդի, դրանով իսկ՝ նաեւ գրականության թշնամի եւ յուրովսանն կանխորոշեց նրա վախճանը, իր «Հայ ժողովրդի պոեզիան» ուսումնասիրության մեջ սկսեց փառաբանել կույր ու գուլ աշուղական պոեզիան (ԽԳ, 1937, թիվ 6-7, 8-9, 1938, թիվ 1, տե՛ս նաեւ նշված առանձին գրքով): Անգրագետների այս վտանգավոր երթը դեպի գրականություն էր առաջնորդում եւ նրանց ոգեւորող զեկուցումներ էր կարդում Նաիրի Զարյանը:

1936-1937-ի գրական սպանդի բեմահարթակում ամենուր արդեն արյունոտ Ն. Զարյանն էր:

Հայաստանի երիտասարդ գրողները, իբրեւ շնորհակալություն եւ երախտագիտություն ստալինյան եղեռնին, հանդես են գալիս չափածո նամակով՝ ուղղված ժողովուրդների առաջնորդ, սիրելի ուսուցիչ, թանկագին հայր, իմաստուն ղեկավար Ստալինին: Նամակը ստորագրել են Գեղամ Սարյանը, Հովհաննես Շիրազը, Գուրգեն Բորյանը, Հենրիկ Թումանյանը, Վահան Արամունին, Սիլվա Կապուտիկյանը, Գրիգոր Արտունին:

*Շարունակելի*

***Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

# ԱՎԱՆԴԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՏԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ

Դարեր շարունակ հայ ժողովուրդը հպարտորեն բարձրաձայնում է, որ ինքն ավանդապաշտ ազգ է եւ ամուր կառչած հազարամյակների խորքից եկած պապենական բարքերին ու սովորույթներին, էթնիկ հոգեկերտվածքին եւ արժեհամակարգին: Այս ամենը, ինչ խոսք, դրվատելի է եւ հույժ կարեւոր՝ ազգային ինքնության պահպանության առումով: Եթե հայ ժողովուրդը լիներ անսկզբունքային եւ դավաճաներ իր ազգային մշակույթին, ապա նա տակավին պատմական անցյալում ձուլված կլիներ պարսիկների, արաբների, թուրք-սելջուկների կամ էլ էթնիկ այլ խմբերի հետ, որոնք մշտապես ջանացել են ուծացման ենթարկել հայերին՝ զրկելով նրանց հարազատ հավատից եւ մշակութային դիմագծից: Դարեր շարունակ մեր ազգը մեծ ուժ ու ջանք է դրսեւորել եւ հաջողությամբ դիմակայել իրենից ավելի մեծաթիվ ու զորեղ ժողովուրդների ոտնձգություններին: Սա պատմական փաստ է, ինչը կարիք չունի հավելյալ ապացույցների: Բայց եւ այնպես սույն հոդվածում մենք նպատակ չունենք լոկ գովերգել հայ ժողովրդին՝ ազգասիրության, հայրենասիրության եւ ավանդապաշտության համար: Մեր նպատակն է բացահայտել, թե որտեղով է անցնում այն փխրուն սահմանագիծը, որը բաժանում է ավանդապաշտությունը հետադիմությունից: Համաձայնենք, որ ավանդապաշտություն եւ հետադիմություն հասկացությունների միջեւ ճշգրիտ սահմանագիծ անցկացնելը բնավ էլ դյուրին չէ, քանզի այս հարցում չի կարող լինել գիտական հստակ մեթոդ: Յուրաքանչյուր անհատ ինքն է, ըստ իր դատողության, որոշում, թե որտեղ է ավարտվում ավանդապաշտությունը, եւ սկսվում՝ հետադիմությունը: Մեր կողմից քննարկվող խնդիրը պարզաբանելու համար անհրաժեշտ է պատասխանել մի հարցի. որքանո՞վ նորմալ կլիներ, եթե հայ ժողովուրդը մինչեւ XXI դ. ճշգրտորեն անխտիր պահպաներ ազգային բոլոր բարքերն ու սովորույթները եւ մշակութային մնացյալ առանձնահատկությունները, որոնցով առաջնորդվում էին պատմական հեռավոր անցյալում ապրած հայերը: Այս հարցն ինքնըստինքյան հուշում է իր տրամաբանական պատասխանը: Ըստ երեւույթին՝ պարզից էլ պարզ է, որ գործնականում անհնար է հազարամյակներ շարունակ խստորեն պահպանել հին բարքերն ու սովորույթները, հոգեբանությունն ու հոգեկերտվածքը, արժեհամակարգը եւ բարոյական նորմերը: Որքան էլ ազգը, տվյալ դեպքում՝ հայ ժողովուրդը, ավանդապաշտ լինի, միեւնույն է, ժամանակը եւ պատմական միջավայրն անխուսափելիորեն թելադրում են իրենց պայմաններն ու պահանջները: Կյանքում ոչինչ չի կարող լինել լիովին անշարժ եւ անփոփոխ: Մարդկային կյանքն ինքնին դինամիկ երեւույթ է եւ ժամանակային մեծ կտրվածքով, անշուշտ, շոշափելի փոփոխությունների է ենթարկվում: Եվ որքան էլ որեւէ ազգ իրեն ավանդապաշտ հռչակի, միեւնույն է, նա չի կարող դեմ գնալ կյանքի եւ պատմության օրենքներին:



Ավանդապաշտության եւ հետադիմության սահմանագիծը տեսնելու համար վերցնենք մի պարզ օրինակ. ինչպես հայտնի է, ցանկացած ազգ, ընդ որում՝ նաեւ հայ ժողովուրդը, դարեր շարունակ կրել է իր ազգային տարազները: Բայց եւ այնպես իրենց ավանդապաշտ համարող ազգերից շատերը, այդ թվում՝ հայերը, պատմական տեսանելի անցյալում, ինչպես նաեւ մեր օրերում, այլեւս ազգային հանդերձանք չեն կրում: Խոսքն այստեղ, անշուշտ, չի վերաբերում ազգագրական տոներին, որոնց ժամանակ ազգային հանդերձ կրելը թեեւ պարտադիր չէ, բայց շատ ցանկալի է եւ միանգամայն տեղին: Ինչեւէ, մեր ժամանակներում ազգային տարազի ամենօրյա կրումը շատ մարդկանց կարող է անսովոր, եթե չասենք՝ տարօրինակ թվալ: Այս ճշմարտության գիտակցումն է, որ մեր հասարակության գերակշռող մասին դրդել է կրել այնպիսի հագուստներ, որոնք մեր օրերում ընդունելի են ցանկացած ազգի ներկայացուցչի համար: Այստեղ եւս մեկ անգամ կցանկանայինք շեշտադրել, որ ազգային հագուստ կրելու մեջ ոչ մի պարսավելի բան չկա, պարզապես ցանկացած մարդ պետք է ունենա երկընտրանքի իրավունք. պահպանե՞լ սեփական ազգի մշակութային բոլոր առանձնահատկությունները, թե՞ լինել ավելի ազատ եւ կոսմոպոլիտ: Հարկ է հաշվի առնել մի կարեւոր հանգամանք. եթե որեւէ ազգ, ընդհուպ նաեւ մեր ժողովուրդը, դարեր շարունակ կառչեր ազգային՝ բացառապես բոլոր ավանդույթներին եւ ոչինչ չվերցներ օտար ազգերից, ապա ազգային մշակույթն ինքնաբերաբար կդառնար ավելի սահմանափակ եւ աղքատիկ: Թեեւ մենք՝ հայերս, մշտապես հպարտորեն հայտարարում ենք, որ մենք հնագույն քաղաքակրթության ներկացուցիչ ենք եւ աշխարհի ամենահարուստ մշակույթներից մեկի կրողը, սակայն սա բնավ չի նշանակում, թե մենք ամենաքաղաքակիրթ, ամենաառաջադեմ ազգն ենք եւ առհասարակ սովորելու բան չունենք այլ ազգերից: Եթե որեւէ հայ այլ տեսակետ ունի եւ կարծում է, թե մեր ազգը պետք է մշակութային լիակատար ինքնամեկուսացման պայմաններում ապրի, ապա նա մեծագույն մոլորության մեջ է: Հիշենք մեր կարկառուն արվեստագետներին՝ արեւմտահայ, արեւելահայ եւ սփյուռքահայ. նրանք իրենց ստեղծագործական կյանքի այս կամ այն փուլում եղել են կա՛մ ռուսական, կա՛մ եվրոպական, կա՛մ էլ որեւէ այլ մշակույթի ազդեցության ներքո: Անկասկած մեր արձակագիրները, բանաստեղծները եւ մյուս արվեստագետները բնավ էլ երես չեն թեքել ազգայինից, սակայն նրանք կարողացել են օտար մշակույթներից վերցնել այն ամենը, ինչն առաջադիմական էր եւ օգտավետ մեր ազգի ու մշակույթի համար: Նույն կերպ պետք է վարվեն շարքային հայերը. նրանք պիտի ծանոթանան այլ ազգերի նիստուկացին, սովորույթներին եւ բարքերին, մտածելակերպին ու արժեքներին, վերջիններից քաղեն այն ամենը, ինչը կոպտորեն չի հակասում մեր մշակույթին եւ կարող է օգտակար ու շահավետ լինել մեր ազգի համար, նպաստել նրա հետագա զարգացմանն ու առաջընթացին: Իսկ մշակութային հնացած եւ վաղուց իրենց դարն ապրած տարրերը պիտի հետզհետե դուրս մղվեն կյանքից եւ փոխարինվեն նորերով, որոնք ավելի համահունչ են արդի ժամանակներին: Սակայն այստեղ մի շատ էական հարց է առաջանում. ո՞վ եւ ինչպե՞ս է որոշելու, թե ազգային մշակույթի որ տարրերն են հնացած, եւ իրականում ինչ է պետք վերցնել օտար ազգերից: Համաձայնենք, որ շարքային մահկանացուի համար բավականին բարդ է ճշգրիտ եւ ազգին չվնասող ընտրություն կատարել՝ չվտանգելով հայության ազգային ինքնությունը: Այս հարցում առողջ դատողություն եւ մեծ իմաստություն է անհրաժեշտ, իսկ այդ կարեւորագույն հատկանիշների կրողները, անկասկած, ազգի մտավորականներն են, որոնց հիմնական առաքելությունն է ուղղորդել հարազատ ժողովրդին, մատնանշել զարգացման ճիշտ ուղին, միեւնույն ժամանակ որոշել եւ լայն հանրությանը ցույց տալ այն սահմանագիծը, որը բաժանում է առաջադիմությունը հետադիմությունից, ճշմարիտ եւ գիտակցված ավանդապաշտությունը՝ հետամնացությունից: Միայն ազգային մտավորականության հորդորները լսելով կարելի է, մի կողմից, հետ չմնալ քաղաքակիրթ աշխարհից, մյուս կողմից՝ պահպանել այն առանցքային հատկանիշները, որոնք հայերին տարբերում են օտար ազգերից:

***Տիգրան ՄԱԼՈՒՄՅԱՆ***
***Բանասիրական գիտ. թեկնածու***

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան
**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

**Հեռախոս՝ 517197**

**Էլ.փոստ՝ qh@etchmiadzin.am**
**astghikstam@gmail.com**
**web կայք՝**
**kh-tert.livejournal.com**
**krishayas.wordpress.com**
Ստոր. տպագր. 3.12.2014 թ.
**Տպաքանակը՝ 2100**
**Գինը՝ 50 դրամ**